

ՏԵՐ ԵՒ ՏՆՈՒՄ

Ե. ՓՈՐՈՍՏԵԱՆ

Նամակ կամ որ եւ է

գրութիւն պետք է ուղղել առ

Տեղիւն ԱՐՇԱԼՈՅՍ րազմի

ԳԱՆՏԻՔ (Նախակառուցի)

Թիւ


E. TOROSSIAN

Dirac.-propr. du journal arménien

ARCHALOUICE

LE CAIRE (EGYPTE)

Boite Postale No.



Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ՐԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան ողջ դահլիս.	60
Վեցամսեայ »	35
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ	
Տարեկան Ֆրանկ	20
Վեցամսեայ »	12

ՐԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՆՆԻԿ ԵՒ ԹՂԹԱՏԱՐԻ ԾԱԽՔԸ ԽՆՔԱԳՐՈՒՔԵԱՆ ՎՐԱՅ Է՛

ԽՆՔԱԳՐՈՒՔԵԱՆ ՈՂՈՐԱԾ ԳՐՈՒՔԻՆԷՆ ԵՍ չ'ԵՆ ՏՐՈՒՐ

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ ԿԱՆԻՔԻ ՎՃԱՐԵԼԻ ԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԻՐ ՈՐԲԵՐԸ

Ո Ր Բ Ե Ր Ը

Գ.

(Շարն . նախորդ թիւէն եւ վերջ)

Ասոնք լա՛ւ, բայց ի՞նչ հարկ անօթիին հաց մերկին հանդերձ՝ չքեալին պաշտպանութիւն խօստանալով խաբել . աւելի ազէկ չէ՞ ճիշտը ըսել թէ՛ — Չեր կրօնքը ու ազգութիւնը ուրացէք, եկէք կաթոլիկ եղիք և Սրբազան Պապին հողաթափին վրայ գրուած խաչը համբուրեցէ՛ք, որ փրկուիք:

Հայր Շարմթան իր կոչումը գիտէ, լի բերկրութեամբ կը ներկայանայ կիսասուուած Պապին, և հետեւեալ հակիրճ տեղեկագիրը կը կարգայ .

« Աստուածապատիւ Տէր Քահանայապետ .

« Աստուածային պաշտօնավարութեան հետամուտութեամբ գացի Հայաստան, տեսայ որ Համիտին սուրբ ջարդ ու բուրդ ըրած է բոլոր Հայերը, տուն տեղ և աւերակ, պարտեզ ու այգի ամայացած, հայք անբնակ և անօթի, մերկ ու ողորմելի այնչափ շուռներ են, որ կը դողան և չ'գիտեն թէ ուր պէտք է ապաստանիլ .

« Ըսի ինքնին, քանի որ հայոց վիճակը վերջին ճգնաժամին մէջն է, ի՞նչ որ ալ ըսենք, պիտի ընեն : Ուստի մէկ կողմէն համիտի անօրէնութիւնը շոյելով, որ թէև քրիստոնէութեան կը հակառակի, բայց ժամանակին պարագայն այնպէս կը պահանջէ որ, մինչդեռ ջուրը պղտորած է, պէտք է ձուկ որսալ, մինչև մեր ձեռքը գործիք եղող քրիստոնէութիւնը իւր գէրը խաղայ . ես ալ պարտաւորութիւնս կողո՞ղ խաբէութեան հետեւելով գործի սկսայ, և ուրախ եմ որ յաջողեցայ շատ հայեր, ու շատ որբեր բերել ձեր փարախը՝ գիտէի թէ Աստուած պատուիրած է որ մեր « այր'ն այր' և ոչն ո՛չ ըլլայ » այն է միշտ ճշմարտորդ խօսիլ, և ոչ սուտ, բայց փորձով գիտենք որ առանց սուտի ալ գործ չ'ըլլար : Այս պարագային մէջ սա փոտահութիւնն ալ ունէի, որ ձեր նազը Աստուծոյ կանցնի, վասն զի երկուքդ ալ անսխալական էք . հետեւաբար համակամ և համափոտ . ուստի զինքը կը համոզէք որ ներէ այս բարեփոխութեանս . վասն զի ձեր և որ նոյնն է իրեն փարախը

« առասօրէն լեցնելու աշխատեցայ, որովհետեւ ինք կ'ըսէ թէ « ուր եսն եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի. » արդ ձեռքովս գրածի պէս գիտեմ, որ Աստուած միշտ ձեր փարախն է, որոյ համար ես իրեն սուվալուկ և հալածական պաշտօնեաներ բերի :

« Տէր Քահանայապետ, եթէ մեծ ուրախութիւն մը ունիմ, այս է թէ կարողացայ արժանաւոր ծառայութիւն մը ընել ձեզ և Աստուծոյ . ուրեմն խնդրեմ, բնորոշ նեցէ՛ք իմ որոտարուլիս և բոլորանուէր աշխատութիւնս, որ առանց ասոր անոր իրաւ թէ անիրաւ խճրճանքին ահանջ տալու կ'ուզամ ուրախութեամբ գրենել յոտս աստուածարեալ Քահանայապետիդ :

Պ. — Իրօք ալ յաջողութիւննիդ գովութեան արժանի է, մանաւանդ որ ասանկ մեծ ծառայութիւն մը առանձինն ըրած էք :

Շ. — Այլափ սուտերուս մէջ գոնէ ճշմարտ մը խօսելու համար, կը խոստովանիմ որ, Հայոց պատրիարք Գերապայժառ Օրմանեան մեր յաջողութեանը մեծապէս նպաստեց :

Պ. — Ի՞նչ կերպով :

Շ. Կոնզակներ գրեց Գաւառի Առաջնորդաց, յանձնարարական թուղթեր զրկեց որ հայերը իրենց որբերը Հռովմէականին և բողոքականին տան :

Պ. — Գոհեմ ծառայութեանէն . բայց ի՞նչ հարկ կար գրել որ բողոքականին նաև տան իրենց որբերը, սրտնք դժոխքի բոցերուն պիտի մատուցին . վասն զի Հռովմայեկեղեցիէն դուրս փրկութիւն չ'կայ :

Շ. — Օրմանեան Հռովմէական հոգևով և սրտով սողորեալ է, և պէտք էր այնպէս ընել, որպէս զի « Պու քաթոլիկ օլու քաթոլիկ իմիշ » չ'ըսեն, ահամայ այդ ձեւը գործածեց . այսու ամենայնիւ ձեր անգառնալի աղօթիւքը թէ՛ արքայութիւնը և թէ՛ դժոխքը պիտի լեցնենք, և բողոքականք բացը պիտի մնան » :

Տէր քահանայապետ, եթէ կը ներէք պիտի համարձակիմ ըսել թէ՛ այս Հայկական հոսանքը պիտի լեցնէ ձեր փարախը և թերևս նեղ ալ պիտի գայ ու շատերը դուրսը պիտի մնան . իմ համոզմամբ պէտք է ընդարձակել (մեծիակ այսու մըն ալ շինուի նէ գէշ չ'ըլլար) :

Պ. — Կ'նդուենիմ ձեր ըսածը թէ՛ « Կեկեալն առիս ոչ հանից արտաքս, բայց կը մտածեմ որ այս մատող մանկտին մեր կրօնքի գիտակցութիւնը չ'ունի . բայց և այնպէս

ենթադրենք որ հետզհետէ սորվեցնենք . սակայն ինչպէ՞ս պիտի կրնանք հանդուրժել այն մարց ճիշտուն, որք ց'վերջ զաւակնին պիտի խնդրեն լալահառաջ :

Շ. — Այդ մտածումները խղճահարութեան արդիւնք են . բայց մոյտերը վերջապէս կը մոռնան . մանկտին կը մեծնայ և կը խորգանայ իւր հայրենի սնէն, ազգէն ու եկեղեցիէն :

Պ. — Հայր Շարմթան, ինդիք մը կայ մտքիս մէջ, որ չեմ կրնար լուծել :

Նս՛ ի պատմութեանէ գիտեմ որ հայերը մեծանքն, մարգատէր և պարտաճանաչ ժողովուրդ մ'են . կը զարմնամ թէ՛ ինչպէս կրնայ ըլլար ու այս մեծ ազգը գոնէ ցամաք հացով մը չ'կրնար որբերը ապրեցնել և կը թողու սո՛, գու և քեց նման մարդորաներ տանին հայ մանկտին փարախները լեցնեն :

Շ. — Այո՛ այնպէս է . չալածանք ու մահ Հայոց վեհանձնութիւնը մեռուցին և ըրին զանոնք փոքրոզի և սորուկ :

Այո՛, Հայոց մէջ կան կարողներ, որոնք մեծ մասամբ իրենց հաճոյից գերին ըլլալով, ոչ ազգ գիտեն և ոչ հայրենիք . իսկ միջին մանաւանդ ստերին կարգի տէր եղողներուն կինը ու աղջիկը ա՛ն, կաթնասուն մանկիկը ա՛ն, կրօնքն ու ազգութիւնը ա՛ն, բնաւին փոյթ չեն ընեք . բաւական է որ հաց, հանդերձ, բնակարան, մանաւանդ գործ տալ խօստանաս :

Պ. Ըսածդ կ'ընդունիմ, բայց կը մտածեմ որ այս պատմական մեծ ազգին երակներուն մէջ իւր նախնեաց արիւնէն գոնէ կաթիլ մ'ալ չ'կա՞յ, գոնէ իրենց պանծալի պատմութեան հպարտացուցիչ յիշատակներն սրտերը չի՛յուզեր, որուն համար չ'կրցի հաւատք գոյացնել թէ, դեռ երկու միլիօնէն աւելի հայ կայ աշխարհի վրայ հազար ընտանիք չե՞ն կրնար որք մը ոտանձնելով երկու հարիւր հազար որք խնամիլ փոխանակ քառասուն կամ յիսուն հալարի :

Շ. — Անոնք հիմայ մեռեալ գիակներ ելած են . խնդրեմ, բացէք փարախին սակի դուրները, թող ներս երթան յոգնած են . մանաւանդ շատերը կէս կուշտ կէս անօթի բերած եմ :

Պ. — Լաւ է, Հայր շարմթան գոհ եմ տուած բացատրութեանէդ :

Ինչ որ Յիսուսի Քրիստոսի փարախը լեցուցիլ, և քու հաշիւը դու պիտի տաս հանդերձեալ կենաց մէջ, ուրեմն Քահանայապետական իշխանութեամբ կը հրաւմայեմ ըսելով՝ ըստ որում մշակն արժանի

է վարձուց իւրոց, ուրեմն ընկ առ իս օրհնեալը հօր իմոյ, և ժառանգեալ զպատարաստեալն քեզ արքայութիւն :

Իրիստոնեայ ճարմթան գնաց ուղղակի արքայութիւն, ուր Մուհամմէտին բազմութիւ հռչակեալը պիտի հիւրընկալեն զինքրերանի՛ իրեն . . . :

Ս .

ԵՐԿՈՒ ԽՕՍԲ ԱՌ

Խ . « Հայտնի կեղծ » ՆՈՐ-ՕՐ ի

Թիւ 12 ին

« Բանանայէն, պատուելիէն, ուսուցիչէն, խմբագրէն, պաշտօնեայէն, վաճառականէն, փաստաբանէն ու ժողովականէն անդին, ծխավաճառն ալ » եւ երբ ծխավաճառը՝ ա՛յլ գիւրիւն է երեւակայել թէ ուրիշ ինչո՛վ կը կազմեն մեր ժողովրդին անձանօթ մասունքները :

Ա. . . Ի կեղտահմուտ հնարամտութեան կըտուցը որ ամենեւին վեր չ'բարձրանար իրեն ամենասիրելի որոնումներէն անդին տեսնել ցանուած հունտերը, հատիկները եւ գոհանալ իմ ոչ այնքան փոյթն են որքան սա ճշմարտութիւնը՝ որ մեղքի մը գուռը կը բանայ ինծի, մեր հանրային կեանքի օպտին համար, ըսել փորձելու երկու բառ իմ ճշմարտութիւն կարծածէս՝ որոցմով չեմ կարծեր թէ ընկերներ եւ բարեկամներ չօգտուին :

Ճշմարտութիւնը խօսիլ, խոտովանիլ, մեղք մ'է՛ որուն դառն փորձը ես ինքս չատանգամ տեսած եմ՝ եւ շատեր ալ նոյն բանը միշտ վկայած են, աւելի սա պատճառաւ թէ՛ յաճախ ճշմարտութիւնը ոչ այնքան օգտակար կը լինի որքան չ'խօսիլը, չ'խոտովանիլը, յորմէ՛ փաստողին փաստարկը հնարամտութիւնները զէթ կ'ընան չափաւորել իր ժամանակաւոր յերկրանքին, սուտին եւ խարդախանքին հանդէս :

Այնպէս եւ ես գիտութեամբ գործեցի չի խոտովանելու մեղքս, ժամանակէ մը ի վեր լուծելու պահած ըլլալու մեղքովս աւելի եւս մեղապարտ, որուն արդարացումը կուգայ հաստատել նոյն վկայութիւնը աղատտի մը այսքան եղած թոյլատուութեանը համար :

Բայց այս բոլորէն յառաջ, ներդրութիւն խնդրելու է ի զիս մտիկ ընդունելէն եւ աւելի Արշալոյսի սեւեռակները գրաւելէս. զբաղելուս համար մարդով մը՝ որ իր գիմակը ինքը կը պատռէ, իր գոյնը ինք կը ցուցնէ եւ իր նկարագիրը իր գիւրն ու զրիշը կը յայտնեն : Իր վրայ, իր անձին զէմ, իր կարողութեան, իր չափին ու չունինն ոչ ինչ չեմք կարող ըսել : Նա կ'ընայ կտրել իր ոտնկապը, կցել ու կ'ից տալ ամենուն, թէ եւ եղան միտմիտներ որք ո՛չ ո՛չ. ամենեւին. երբէ՛ք. ըսելով. գոչելով մասերնին կը շարժէին, մինչդեռ հիմայ ամօթով գլուխնին կախ, ապաշխարութիւնով քառութեան ետեւէ են :

Բայց այդ բոլորին առանց կարեւորութիւն տալու, իբր ընկերական իրաւունք՝ նախ սա հարցը ընենք. թէ ինչո՛վ կազմուած է « Լսարան-Ընթերցատուն » ընկերութիւնը. երբ քահանայ, պատուելի, ուսուցիչ, խմբագիր, պաշտօնեայ, վաճառական, փաստաբան, ժողովական, ծխավաճառ, լուծալափոխ, ամենքն ալ կեղտի մեծ մեծ մասնակցութիւններով կը դասաւորուին : Արդեօք ո՛վ է այս « Լսարան-Ընթերցատուն » որ ընկերակազմութեան, ժողովրդակաւնութեան անդին, առանձին մարմին մը կը կազմէ եւ կուրացած աչքովը չ'տեսներ մեր ժոթովրդի այն ազնիւ ու գովելի ձիւրքերը որք մէկ մէկ անդին գանձի պէս պահուած կան իր պահեստի մասանին մէջ :

Միթէ ո՛վ չ'համարիր փառքը, պարծանքը մեր ժողովրդեան, երբ գիտէ իր ծխավաճառը ու սխալաւորութիւնը կազմել, խորհիլ, դատել ու եղբակացութեան մը գալէ յետոյ վճիռներ արձակել :

Ո՛վ կ'ընայ արհամարել ժողովրդի մը դաւկին այսքան պատրաստակաւնութիւնը զէպի յաւաղիմութիւն, զէպի զարգացում՝ որ աղբիւրն

է իր մտքի ու հոգեոյն շնորհաց : Միթէ աղիտութեան կամ յետադիմութեան նշանա՛կ պէտք է համարել ստոնք, որպէս կը կարծէ « Լսարան-Ընթերցատուն » ընկերութեան սրբացած անուան անուորը թերթը : Միթէ չի՞ կրընար մրցիլ մեր սխալաւորութիւն, մեր ծխավաճառը, մեր լուծալափոխը օտար ազգերու ո՛չ թէ ազգո ու անուս գիւղացուն՝ այլ բուն իոկ բանգէտ քաղաքացուն հետ :

Այո՛, ոչ ոք կ'ընայ ուրանալ այս ճշմարտութիւնը քանի որ ալ յայտ յանդիման կ'ընայ կուրծք պալ մեր սխալաւորութիւն, հարուստ դրամատիրոջ. մեր լուծալափոխը, անուս հետեւողին, իւրաքանչիւրը իր դատողութեամբ, իր պայծառ մտքի ինքնարուղիս ճշմարտութիւնով :

Չ'իշխե՛ք հինը, հին անցեալը որ աղբաօր, արհեստաւորը, ձեռքը կուրծքին չ'դրած կարելի չէր շրթունքը երեբցնել Աղային գիմացը, գեղին ֆեհեային գիմացը :

Այսօր, նախ բարեկրթութիւնը՝ որ ժողովներու մէջ խոնարհ հետեւողութեամբ, հարուստն ալ, աղքատն ալ, գիտունն ալ, անուսն ալ կարող են իրենց սեփական կարծիքը յայտնել գիտնի ամենայն ազատութեամբ խօսիլ եւ որ աւելին է, հանրային թշնամիներու գէշ արարները խտրել քննադատել եւ մինչեւ իսկ պարսակել ու պախարակել, եւ իր արդար վճիռը այդպիսեաց ճակատին աներկիւղ կերպով գործմել :

Ի՞նչ . միթէ այս բոլորը մեր ժողովրդի յառաջդիմութեան նախնորհանք չ'են համարուիր. եւ միթէ այս շարժումին մէջ մանկուով սեկարածին, ծխավաճառը, մխավաճառը մեղաւոր եղած են :

Ո՛չ, ո՛չ . այդպիսիք կամ այդպէս կարծողները ոչ թէ մեր ժողովրդեան թերի կողմերը մատանիչ ընելու սկզբնական պարտակալութիւնովը հրապարակ կը նետուին, այլ ընդհակառակը իրենց ժանգոտած սրտին աղտերը պարսակելու համար, մեր ժողովուրդը մրտաւ կը փորձեն. որպէս զի իրենց զէմքին ու իրենց ներկ՛ւղ ուզած մանածի կտաւին գոյնեբը չը քննադատուին :

Բայց կարելի՞ է արեօք փակել այն աչքերը որ բացուած է արդէն. եւ բռնաբարել այն կարողութիւններն որ չեն պարտկուիր արդէն :

Ո՛վ չ'պիտի կ'ընայ գովարանել մեր ժողովուրդի ներդրամութիւնը այսքան ծայրայեղ անիրաւութեան մը դէմ, որ կը թոյլատրուի Լսարան-Ընթերցատուն ընկերութեան մը անուանը տակ :

Եւ այն քանի մը միջնորդները՝ որ կը սատարեն եւ գիշերազնացի ճանապարհաւ կոյր հետեւողներ կը լինին, արեօք չ'պիտի՞ մեղքընան իրենց պատիւը երբ տեսնեն թէ՛ նախատուած սեկարածին, ծխավաճառը ու լուծալափոխը գիտէ վաճառել զիրենք ու արտաքսել այն սեղէն՝ որոյ տէրը ըլլալ կը կարծին :

Դեռ չ'են յուսար մեր ժողովրդէն ամեն բան, երբ օրերը փոխուած են եւ հին ատենները անցած ըմբաց . . . :

ՏԵԼԵՄԱՔ

ԱՐՄԻԴ Դ ՇԱՅՐԵՆԵԱՑ

— 0 —

Հայրենիքի բարձանց վերեւ դու նստած, Անքուն աչօք նայիս վար, Արիւնաներկ հորիզոնիդ սխարագեաց, Յայտն կայծեր մշտավառ :

Աւերակաց կոյտերուն տակ շախմատուած, Դիակներուն ես պաշտպան, Անմահ հոգեոց քայլերդին հետ առ Աստուած, Թեւահարկս յաւիտեան :

Անգութ լեբանց գարշապարն միշտ կրծող Արեան անհուն վտակներ, Կ'ոսկիգոծեն մեր քաղերն ծածկած հող եւ անոնց վեհ ոսկորներ :

Դարուց ի վեր թափած արցունքն հայ մանկան, Երես իր թաց աչերէն, Երկնից ողորկ ճակատին հանգոյն գիւական Տանիս շարել այս երկրէն :

Մինչ գիշերուայ մահազգեցիկն այն բառուեր Դայ նուաճել սրտիդ յոյս, Մասեաց թեւին տակ կ'սպասես անվեհեր Մինչեւ ծագի արշալոյս : ԱՐԱՅ Մ. ԵԱԶԸՃԵԱՆ

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Լոնտրա 10 Յուլիս . — Սենեկալի բուրտիքը թշնամուոյն ամբողջ գիրքերը պարպուեցաւ : Պօէրներուն շատերը ֆիզսպուրկի կողմը քաշուեցան : Անգլիական զինուորներուն պաշարող շարժման արտադրած ճնշումին անվիճելի ապացոյցն է այս :

Հարաւային Աֆրիկէի մէջ մինչեւ ամսոյս 7 կորուստներուն պաշտօնական թիւը 30, 693 մարդու կը բարձրանայ առանց հաշուելու հիւանդները եւ վիրաւորեալները, որք կը գտնուին հիւանդանոցներուն մէջ :

Լոնտրա 10 Յուլիս . — Լորտ Ռօպրթս Իրէթօրիսէն կը հեռագրէ թէ՛ Տըվէթ զօրավարին անձնատուր ըլլալու մերժումէն վերջ Գլէմանթս եւ Բաթէ զօրավարները յարձակեցան Պօէրներուն վրայ եւ 7 ին Բէթլէհէմ քաղաքը առին : Թշնամին ետ քաշուեցաւ : Երեկ զօրավար Հըրթըր Բէթլէհէմ հասաւ :

Լոնտրա 10 Յուլիս . — Ձինացիները ամսոյս 4 ին յարձակեցան Թիէն-Ձինի օտարականներու շնորհուած հողերուն վրայ, բայց ետ մղուեցան : Դաշնակիցները երեսունի չափ մեռած եւ վիրաւորեալ ունեցան : Անգլիական Թէրրիպըլ զրահաւորին թնդանօթները ուժակոծեցին եւ լւեցուցին Ձինական հրեամարտիկները եւ լւեցուցին Ձինական հրեամարտիկները : Թշնամին որ կ'սպասուար Եւրոպական մեծաշնորհներուն :

Բարիկ 10 Յուլիս . — Կայսրուհին կառավարութեան զեկը նորէն ձեռք առաւ, կը յանձնարարէ Եանձէլի փոխարքաներուն որ օտարականները պաշտպանեն :

Լոնտրա 10 Յուլիս . — Պետութիւններուն ուղղուած ամերիկեան ծանուցագիր մը կ'ըսէ թէ՛ Նախագահը կը փափաքի տէրութեանց հետ համերաշխ գործել Ձինաստանի մէջ՝ անգործութիւնը վերահաստատելու Ձինական կայսրութեան ամբողջութիւնը պահպանելու եւ վաճառականութեան հաւասարութիւնը պահելու համար :

Լոնտրա 10 Յուլիս . — Թիէն-Ձինի բուրտիքը գտնուող Ձինացի ուժաւորները շատ ճարտար հրացանաձիգներ կ'երեւան :

Լոնտրա 11 Յուլիս . — Յուլիս 4 ին Թիէն-Ձինի մէջ տեղի ունեցող պատերազմներուն վրայ մանրամասնութիւններ հասան : Ձինացիները գրեթէ 70, 000 հոգիի չափ էին. եւ հրամանատարները թէ եւ համրակ էին բայց թնդանօթները հիանալի կերպով կը գործածէին . դաշնակիցներու հետեակ զօրքերուն բաւական փնտնելու տուին : Անգլիական զօրքերը 30 ի չափ մարդ կորսնցուցին. Ռուսական, Գերմանական եւ Ճաւանական զինուորները ալ աւելի վտանգուեցան : Ճարտարները շատ ճարտարութեամբ եւ հիանալի կերպով կուրեցան : Պատերազմը երկու օր վերջ նորէն սկսեց

և 8 ժամ թնդանօթաձգութենէ վերջ հրետանին լուեց:

Պէրլին 11 Յուլիս. — Մովակալ Ռէմէյ 10 թուականու կը հեռագրէ թէ՛ Սրբ Սէյմուրէն առնուած տեղեկութեանց նա- յելով թիէն-Ձինի մէջ օտարականները շատ նեղ դրութեան մէջ են:

Ձինացիները առանց ընդհատման երեք օր ուժակոծեցին օտարականներու բնա- կութիւնները: Անգղիական և ճարձական թնդանօթները պատասխանեցին:

Ամսոյ 6 ին Պօքարները Պրանսական մեհաշորհներուն վրայ յարձակեցան բայց ուսական զինուորներուն կողմէ ետ մղուեցան:

Ս. Բեթրապուրկ 11 Յուլիս. — Հոս հասած լուրերուն նայելով Մանչուրիոյ մէջ կացութիւնը կը ծանրանայ. 55 մղոն երկաթուղի քանդած են: Պօքարները անխահանքերու մէջ աշխատող անգլիացիները արտաքսեցին:

Թօքիօ 11 Յուլիս. — Ճարձական դահլիճը ամեն օր ժողովներ կ'ընէ և Ձինաստան նոր զինուորներ զրկելու խնդիրներով կ'զբաղի:

Բրեթօրիա 11 Յուլիս. — Կը կարծուի թէ՛ Բեթլէհեմի առումը խաղաղութեան հաւանականութիւնները աւելցուց. Պ. Սթէյ- նի կառավարութեան ամբողջ անդամները ի բաց առեալ նախագահը իրենց հպատակութիւնը յայտնեցին:

Շատ մը թշնամի կուսակցութիւններ կ'սպառնան Օհանէսպուրիի և Բրեթօրիայի մէջ տեղ գտնուող երկաթուղիին. բայց գիծը շատ լաւ պաշտպանուած է:

Լոնտրա 12 Յուլիս. — Մովակալ Սըր Սէյմուր Թիէն-Ձինէն կը հեռագրէ յուլիս 7 թուականու թէ՛ Ձինացիները կը շարունակեն քաղաքը ուժակոծել և թէ՛ կը բազմապատկեն իրենց գումարտակները, Իաշնակիցները օգնական զօրքերու պէտք ունին:

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԽՏԻՎԻՆ ՀԵՏԵԻՈՐԻՆԵՐԸ. — Արարողութեան Հասան փաշա Ասրի . Ն . Բ . Խոտի վին առաջին թիկնապար: Ահմէտ փաշա Ձէ- րի և ուրիշ պաշտօնատարներ որք Ն . Բարձրութեան կ'ընկերանային Անգղիա ըրած ճամբորդութեան մէջ, յառաջիկայ կիրակի հոս կ'սպասուին:

Տը Մարթինօ փաշա, Շէֆիք պէյ և Տր . Գաուձը պէյ Ն . Բարձրութեան հետ պիտի մնան ի Տիվօն և անտի շատ հաւանա- կան է որ Օգոստ . 31 ին Պոլիս երթան:

ՆԵՐՈՒՄ . — Արգարութեան գործոց նախարարութիւնը Մահիէ Սանիյէին գրեց Ն . Բարձրութեան խնդրելու համար տնքը- ժշկելի հիւանդութեանց ենթակայ եղող չորս բերդարգելներուն ներումը:

Բանաարկեալներէն մին իւր ներումը ստանալէ առաջ մեռած է, հաւանական է որ միւս երեքները մօտ օրերս ալ շատ ար- ձակուին:

ՈՂԲԵՐԳԱՎԱՆ ՄԱՀ . — Չակա լիկէն կը հաղորդեն Հիւսէյին պէյ Փէհիի սղբեր- գական մահը. Չորսօրոյի պաշտօնատան նա- խորգ պետը Չակագիկի երկաթուղին պիտի նստէր, բայց սխալմամբ Մանուշայինը

նստած էր, երբ կառախուժը քաղեց իսկոյն հասկցաւ իւր սխալումը և միւսին մէջ յատկել ուղեց, բայց գփաղաբար անի- ներուն տակ ինչալով մարմինը չորս կտոր եղաւ. դիակը հիւանդանոց զրկուեցաւ: Թաղումը Գահրէի մէջ պիտի կատարուի:

ԼՈՒՍԱՎԱՌՈՒԹԻՒՆ . — Քաղաքները ե- լեքորականութեամբ լուսաւորելու համար շատ մը ընկերութիւններ արտօնութիւններ խնդրեցին: Մանուշայի մէջ փորձ մը տեղի ունեցաւ, և դեռ նոր աստեղներս երկրաչափ մը հոն դնաց տեղեկանալու համար լուսա-ւորութեան գինը և պայմանները: Այս եր- կրաչափը Գահրէ վերագործածին պէս իւր տեղեկագիրը պիտի մատուցանէ:

ԺԱՆՏԱԽՏԸ . — Յուլիս 10 ին վեր- ջացող շարժումն մէջ ժանտախտի մէկ դէպք և մէկ մահ պատահեցաւ Բօր-Սայիտի հի-ւանդանոցին մէջ, և ոչինչ Եգիպտոսի մը- նացեալ մասերուն մէջ:

ԱՌԱՋՆՈՐԴԸ . — Առաջնորդական տե- ղապահին աչքը լոյս, իր պաշտօնավարու- թիւնը, որուն ամենամեծ ազահութեամբ փառած է, կ'երկարի հետզհետէ:

Սուրհանդակի և Պօլսոյ ուրիշ թերթե- ռուն գրածին նայելով, Գահրէի նորընտիր Առաջնորդը ճարտանէլ գացած է կամ զըր- կած են, վիճակային խնդիրներ կարգա- դրելու համար: Աստեղ մէջ է նաև քահա- նայի մը ձեռնագրութիւնը, որուն համար պիտի կրնանք ըսել թէ, հայ ազգը իր մէջը փորձանք մը եւս աւելցնելու դրժ- բազգութիւնը պիտի ունենայ և այն ալ Յովսէփ Եպիսկոպոսին ձեռամբ: Կ'ուզէինք յուսալ որ Յովսէփ Եպիսկոպոս իւր խոհա- կան անձ մը չի հաճիր նոր քահանաներ ձեռնագրել, մինչև որ հինները հասնին և այդ պաշտօնէից պէտքը այլ ևս բոլո- րովին անգգալի գառնայ:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ . — Փարիզի Համալսարան Գիտական և Գրական Ամսաթերթի Խմբագ- րութիւնը հետեւեալը զրկած է մեզ ի հրա- տարակութիւն.

Տէ՛ր,

Կը փութանք ծանուցանել թէ՛ քիչ ժամանակէն պիտի հրատարակուի ՀԱՄԱԼ- ՍԱՐԱՆԻ Տրդ. թիւը, որ ուշացած է, Տրդ- թիւին հետ միացած:

Այդ զոյգ թիւին մէջ, ամբողջ պրակ մը յատկացուած է Փարիզի արուեստահանգի- սին, որուն գլխաւոր շէնքերէն և տեսա- րաններէն 12 շքեղ նկարներ զետեղուած են հոն:

Ուրախութեամբ կը յայտարարենք նաև որ յաջողած ենք ունենալ սեփական Տրդա- րան մը ուր ամեն տեսակ տպարանական գործեր կ'անուսին չափաւոր գներով:

Բնդունեցէք մեր յարգանքներն

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀՆԵՎԱՆԻ ՎԻՇԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԲԱԹ 13 ՅՈՒԼՅՈՒ 1900					
3664	5976	6285	187	4904	2540
8752	587	4431	2542	582	7552
6167	898	703	5138	1629	8125
6152	9388	9690	5369	6128	3423
	9795	3373	9197		

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՐԱՆՍՎԱԼ

Չորսօր Ռընտրի անգլիացիներ:

— Պօէր հրամանատարը չորսօր Ռըն- տրլին յանդիմանեց. որովհետև այս վեր- ջինը ամսոյ 22 և 23 ին, Սենեկալի մօտ ուժակոծեց ագարակներ, ուր կիներ կը գտնուին եզեր և բարեբաղաբար չ'են վիրաւորուած: Չորսօր Ռընտրլի յայտա- րարեց թէ՛ կանխաւ Պօէրներուն իմաց տրուած էր որ եթէ ագարակներէն հրա- ցանաձգութիւնը լինին՝ հետեւանքներուն միմիայն Պօէրները պատասխանատու պի- տի ըլլան:

ՏՐԱՆՍԱԿԱՆ . ԳՕՄԻԹԷՆ . — Պօէրներու անկախութեան համար Գօմիթէն մինչ ց'արդ- բազգութիւ համախոհներ ունեցած է որոնց մէջ շատ մը ընտրեալ դասուն պատկանող անձնաւորութիւններ ալ կան: Ահաւասիկ ան- դամներուն դասաւարումը . 71 ծերակու- տական, 312 ընդհանուր խորհրդական, 1, 2500 թաղապետական խորհրդական:

Ասկէ զատ, Գօմիթէն ընդունեց Պ . Գր- ըիսթման Տը Վիլպուա-Մարէօյի հաճութիւ- նը Պօէրներու գատին համար մեռնող զըն- դապետին եղբայրն է այս որ յաջորդ նա- մակը դրած է Գօմիթէին նախագահ Պր . Փօլիսթի:

Պ . ՆԱԽԱԳԱՀ

Պատիւ ունիմ ձեզմէ խնդրելու որ բա- րեհաճէիք Պօէրներու անկախութեան համար կազմուած Գօմիթէին անդամներուն մէջ զիս ալ արձանագրել:

Գօմիթէն կրնայ վստահել իմ վրաս, և եթէ հարկ ըլլայ անձս իւր տրամա- րութեան տակն է, ընդունեցէք Պր . Նախա- գահ իմ խորին զգացմանցս հաւատարմն:

Կոմս Տը Վիլպուա-Մարէօյ

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Ձինական աղբիւրէ եկած լուրերը կը սեն թէ՛ Գերմանական գետապահին սպաննու- թեան օրը՝ երկու ուրիշ գետապահներ ևս ըս- պաննուած են և որոց ալ չ'ապստիւթիւնը չ'է նշանակուած, և տարակուսելի է որ Փէքի- նի մէջ ողջ օտարական գտնուի: Միևնոյն լուրերուն նայելով . Մուղտէնի քարոզիչ- ներուն հիւանդանոցը հրոյ ճարակ եղած է և տեղացի քրիստոնեաներն ալ Չարդուած են, Օտար քարոզիչները նիւս-Շուանկ փա- խան:

Ռուսական վերջին լուրերը կը հաստա- տեն թէ՛ Պօքարներու ապստամբութիւնը կը նուազի Մանչուրիոյ ներքին մասերուն մէջ: Ռուսական ընդհանուր սպայակոյտին ըրած քննութիւնէն կը հետեւի որ տպաստամբութիւ- նը տակն ու վրայ կ'ընէ Մանչուրիոյ թէ՛ հիւ- սիսային և թէ՛ հարաւային նահանգները:

Պօքարները յարձակեցան թրանսի- պերեան երկրթուղիին վրայ: Ասկէ զատ Վլատիլօսթօքի և Բօրթի-Ալթիւրի մէջ գտ- նուած հեռագրական թեւեղն ալ կարուեցան:

Ռուսական կառավարութիւնը չինական գետապահին կանխաւ ծանուցած էր որ եթէ ապստամբները Մանչուրիոյ ուսական եր- կաթուղւոյն զպչէին, Ռուսիան անմիջապէս իւր ոյթերը Ձինաստանի դէմ պիտի դար- ձնէր, Ձինական գետապահը յուսահատած է:

Թ Ո Ւ Ր Ք Ի ՈՒ

— Սուլթանը ձարտից ճահին այնպիսի փայլուն ընդունելութիւն մը պիտի ընէ Պօ- լիսէն անցած ժամանակ, որ պիտի գերա- զանցէ Գերմանիոյ կայսեր: Պաշտօնին ըրած

Ճամբորդութեան միջոցին եղածը:

Յ Ր Ա Ն Ս Ա

—Երեսփոխանական ժողովին մէջ Պ. Լէոն Պուռտուա հետեւեալը առաջարկեց: «Երեսփոխանական դահլիճը՝ Փրանսայի երախտագիտութիւնը կը յայտնէ Ամերիկեան ազգին այն յիշատակարանին նուիրման համար, որ պիտի մշտնջենաւորէ երկու պետութեանց մէջ հաւասարապէս սիրելի եղած յիշատակները»:

Պ. Տելքասէ կը յայտարարէ թէ՛ կառավարութիւնը արդէն իւր երախտագիտութեան արտայայտութիւնը ըրած է Սաչինկթի կառավարութեան, այսու հանդերձ կրնկերանայ այս որոշման և միաձայնութեամբ կ'ընդունուի:

Կ. Տէշանէլ Երեսփոխանական դահլիճին նախագահը ուրախացաւ այս միաձայնութիւնը տեսնելով և յայտարարեց թէ՛ պիտի փութայ այս որոշումը Ամերիկեան կառավարութեան հաղորդել, որով անգամ մը ևս կը շեշտուի երկու հանրապետութիւնները միացնող դարաւոր բարեկամութիւնը:

Ժ Ե Օ Ն - Թ Ո Ւ Ր Ք Ե Ր Բ

Հուովէն կը գրեն Յուլիս 2 թուականաւ: —Թուրքիոյ Անգլիստէր կուսակցութեան պետ և Թրիփոլի ընդհանուր կառավարիչ Իսմայիլ-բէմալ պէյ, որ քանի մը շարժաթ առաջ իւր ընտանիքով Պոլիս փախած էր քանի մը օր Հոսմ կենալէ վերջ միկնեցաւ դէպի Բարիզ և անտի Լոնտրա Իսմայիլ-բէմալ պէյ որ Ալպանիական ինքնավարութեան ակոյեան կանգնած է, քանից տեսակցութիւններ ունեցաւ արտաքին գործոց նախարար Պ. Վիսզօնիթի-Վիօսթայի և Պ. Գրիպիի և Թրիպիլիսա լրագրին խմբագիրներէն միոյն հետ. բայց խնդրոյն ամենէն լուրջ կէտը այն տեսակցութիւնն է՝ զոր ունեցաւ Իտալիոյ Ալպանիական յիշատակական գօմիթէներու պետ Պ. Անսէլմօ Լօրէչչիօյի հետ:

Պ. Լօրէչչոյ արձակ համարձակ կ'աշխատի Ալպանիացեաց ազատագրութեանը համար, կամ լաւ ևս է ըսել ինպատ Ալպանիոյ և Թուրքիոյ: Այս ամբողջ տեսակցութիւնները բաւական խոր տպաւորութիւն մը թողուցած են:

ՀԱՆԱՔԱԾՈՅ

ՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ

ՏՆՕՐԷՆ Լ. ԵՂԻԱՋԱՐԵԱՆՑ — ԲԱՐԻՉ

Ականաւոր և հեղինակաւոր երաժիշտներու աշակցութեամբ եռամսյն և քառամսյն պատրաստուած սոյն հաւաքածոյէն գնել փափաքողներն կամ բաժանորդագրուել ուզողներն, կրնան գիմել՝ Արշաղոյսի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ Հիմնադիր-Տնօրէնին:

Տիար Մ. Հայկունի Բարիզ ուղեւորելուն պատճառաւ, իւր հրատարակած «Վարագոյր Մարդկային Կենաց» գրքին սակաւթիւ օրինակներն յանձնած է Արշաղոյսի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԸ: Կնել փափաքող կրնան հոն գիմել:

Քանի մը օրինակ մէկ անգամէն գնողին 20 առ հարիւր զեղջ կը լինի:

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

Ն Ա Ր Ա Կ Ա Ջ Մ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

«ԱՐՇԱԼՈՅՍ»

Հիմնադր. 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱԶԻԶԻ ՍԿԻՉԲԸ

Օտեսիյէ դեղատանին դիւնայի փողոցին մէջ:

Տպարանը բաց պիտի ըլլայ ամեն օր, առաւօտեան ժամը 7 էն մինչև երեկոյեան ժամը 8:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մաքուր և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ, կ'ընդունուին:

Այցեխարտեր, Երջարտախաւներ, Գիտեր, Հրախարտեր, Մանադղեր, Տեղեկագիրներ, Կանոնագիրներ, Տոմսեր և այլ և այլ վաճառականական յանձնարարութիւններ:

Ամենակատարեալ ճշգրտագիտութիւն և չափաւոր գին:

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԻԿ ԵՆ:

Կ Ո Պ Ե Ռ Պ Ե Ն Լ Ե Ա Ն

Ե Ի Ը Ն Կ Ե Ր

ՆՈՐ ԼՈՒՍԱՆԱՐՁՍՏՈՒՆ ԵՒ ՆԿԱՐՁՍՏՈՒՆ

Տասներկու տարիներ շարունակ կարեւոր լուսանկարչատուններու մէջ աշխատելով, արհեստին ամեն ճիւղերը լաւ մշակած և փորձառութիւն ստացած է:

Պոլսոյ մէջ Ապտուլլահ եղբարց տան, ինչպէս և ուրիշ մի քանի ծանօթ տուններու, քաղաքիս մէջ վերջին անգամ Լէքէճեան գործատան մէջ ամենակարեւոր պաշտօնը վարած, այժմ առանձին գործատեղի մը կը հիմնէ Էօզպէֆիյէ Նարիս Գաւնէլ Օթմէլ Շէթլի-ՍՍԻ ճիշտ գիմաց թիւ 3 արարթըմանին երրորդ յարկը, ուր կը պատրաստէ լուսանկարներ, ինչպէս և գուրուր կուտիներ ի հարկին:

Ախրաւեսիալան բնական մեծութեամբ: Կենդանագիրներ ամբերիկեան մեքենայով որոնք երբէք չ'են աւրուիր:

Գունաւոր լուսանկարներ ամեն մեծութեամբ բնական գոյներով միկնեաքիտ:

Իւզաներկ և ջրաներկ պատկերներ և ընդ լուսանկարի և պատկերահանութեան վերաբերեալ յանձնարարութիւններ կ'ընդունի յորտոյ, ճեփեղբորման և ընդ:

Իրեն գիմող յաճախողներն հանել տուած լուսանկարներուն հետ միեւնոյնէն գունաւոր մը նուէր պիտի ստանան, որ նորութիւն մէ:

Տ Հ Ի Մ Ի Զ Ո Ի Ա Լ Լ Ա Յ Յ

Կ Ե Ն Ա Ց Ա Պ Ա Յ Ո Վ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա Շ Ի Ա Ր Չ Ի Ա Մ Ե Ն Ե Ն Հ Ա Ր Ո Ւ Ս Տ Ե Ե Ի Կ Ա Ր Ե Ի Ո Ր Ը

Ե Ր Ա Շ Ի Ա Ի Ո Ր Ե Ս Լ Գ Ր Ա Մ Ա Գ Լ Ո Ւ Ի 1 Մ Ի Լ Ե Ա Ր 437 Մ Ի Լ Ի Ո Ն

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէնէն աւելի շահաբաժինները:

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ինպատ իրենց գումարած է 3 ՄԻԼԵՍԻ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ այսարհի ուրիշ որ և է ընդունութեան մէկ միլեար աւելի է:

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ

ՏՕՔԹ. Ա. Յ. ԳԵՐԵՍՈՒԹԻՃԵԱՆ

Ի Շարեա Գոր-Պէյ, թիւ 20

Իր 21-ի խորհրդակցութիւնները ասկից վերջը, միայն ուրախ օրերը կես օրէ առաջ ժամը (ը. և.) 9 էն 11 որոշած ըլլալով կը խնդրէ մեզմէ ծանուցանել զայդ, ի գիտութիւն իրեն գիմել ուղղող աղքատ հիւանդներու:

Գ Ա Ֆ Է Ս Օ Ք Ա

Տիգրան Կոտանեան պատիւ ունի ծանուցանել Արգոյ հասարակութեան թէ՛ վերջերս սկսած է իւր Փաղար-Մրուրի խանութին մէջ պապրաստել Ենմենի սուրճին ամենաբարձր և անխարդախ տեսակէն իրեն գիմող յաճախողներ օխան 16 զըռ ողջի հաշուով, զուտ Բալէ պիտի կրնան գնել կշռոյ մէջ ալ ուղղամտութիւն գտնելով:

Գ Ր Ք Ե Ո Ւ Յ Ո Ղ Ն Ե Ր Ո Ւ Ն

Գահիրէի և չըվակայից գրասէր Հայ հասարակութեան գիւրութիւն մը տալու մտօք՝ կը ծանուցուի թէ Հայերէն ամեն գիրք, (Գառախան, Կարոյան, Գիտական, Գրական Արուեստական, Բանասիրական, Վիպական եւ այլն) որ հրատարակուած են և կը հրատարակուին Պոլիս, Իզմիր, Երուսաղէմ, Թիֆլիզ, Վենետիկ ու Վիեննա, կարելի է գիւրաստացելի պայմաններով ձեռք բերել՝ գիմելով Տիար Կ. Նաւասարգեանի, Գալստեան վարժարան Հայոց ի Գահիրէ:

ՏՕՔԹ. ԺՈՐժ Փ. ԷՎԼԻԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՐԱՐՈՑԺ

Ապօրին Շարա Բուպրի Թ/ս 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ ակուաներ:

Կը դադրեցնէ վայրկեանապէս ակուայից սակերը, ամերիկեան նորագոյն մեթօտով իւր պատրաստած դեղերով:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած ակուաներուն տոկունութիւնն առ նուազն երկու տարուան հախար կ'երայխաւորէ:

Վկայեալ նշքամներու ճիշտ գարմանում, ամեն օր կ'էսօրէ ևս ք ժամը 5-5:

Այսարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութեան և անկի երախտագիտութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրին կը գանձէ:

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործակատար ԵՂԵՔԱՆԳՐԻԱՆ